

Ա Է Ե Տ Ա Բ Ե Բ



“ՓՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՔ ԵՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՓԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ 16.


ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1892

ԹԻԻ 5

ՍՅՈՒՔԸ

Սթոքհոլմ, Շուեթի մայրաքաղաքը, որոյ պատկերը կը գնենք յաջորդ երեսին վրայ, հիւսիսային եւրոպայի մէջ գեղեցկագոյն գիրք ունեցող քաղաքն է: Շինուած է այն կէտին վրայ ուր Մալար լճին ջուրերը կը թափին Պալմիկ լճով: Հին քաղաքը շինուած էր երեք կողեաց վրայ և ուստի կոչուած է “Հիւսիսային Վենետիկ”: Բայց քան զՎենետիկ աւելի մաքուր քաղաք է, և իւր բնական գեղեցկութեամբ կը գերազանցէ զայն: Կղզիներն այժմ կը կաղմեն քաղաքին կեդրոնական մասը, և իրարու հետ և հիւսիսային և հարաւային կողմէն ցամաքին հետ կապակցեալ են կամուրջներով: Այս կամուրջներուն գեղեցկագոյնն է Նորուոյ (Հիւսիսային կամուրջ), որ կը յօդէ գլխաւոր կղզին Նորմալմէն (Հիւսիսային թաղ) կոչուած արուարձանին հետ: Այս թաղը և Սէօտերմալմէն



ՊԵՏԵՐՆՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ Ի ՍՅՈՒՔԸ

(Հարաւային թաղ) կը տարբերին իրարմէ այնպէս ինչպէս Լոնտոնի Արևմտեան և Արևելեան թաղքը իրարմէ: Նորմալմէն բարձր դասու թաղն է. հոն կը գտնուին լայն փողոցներ, փառաւոր տուններ և հասարակաց շէնքերէն շատը: Սէօտերմալմէն է գործաւոր դասու թաղը:

1885ի մարդահամարէն տեսնուեցաւ որ Սթոքհոլմի բնակչաց թիւն էր 245,688: Քաղաքին համարաւոր հիմնարկէն է Պերքեր Եարլ, որոյ որդին, Վալտէմար, թագաւոր ընտրուեցաւ յամին 1250: Կղզիները ընդարձակուած են ցեղեր տնկելով ջրին մէջ, և այս է պատճառը որ քաղաքը կը կոչուի Սթոքհոլմ, այսինքն “Ցիցերու Քաղաք”: Քաղաքին այլ և այլ մասանց մէջտեղ հաղորդակցութիւնը կը կատարուի մեծաւ մասամբ շոգեմաներով, որոցմէ վաթսուներեք հատ կը գործածուէին 1884ին:

Ի Սթոքհոլմ, որ երեք կողեաց մեծագոյնն է, կառուցուած է արքայական պալատը, Սթոքհոլմի պատկերին մէջ տեղըտեսնուած ընդարձակ քառակուսի շէնքը, որ իւր ձախակողմն ունի եկեղեցի մը բարձր զանգատունով: Այս պալատին շինութիւնն աւարտեցաւ 1754ին: Կրանիթ քարէ շինուած է այն, և իւր ընտիր ճարտարապետութեամբ և բարձրութեամբ քաղաքին նշանաւորագոյն առարկաներէն մին է: Կը պարունակէ շատ մը շքեղ սրահներ, որոց գլխաւորն է հացկերոյթի մեծ սրահը, “Սպիտակ լճով” անուանեալ, 135 ոտք երկայնութեամբ և 114 ոտք լայնութեամբ:

Ուրիշ նշանաւոր շէնք մը, որոյ պատկերը կը տեսնէք այս երեսին վրայ, է Պիտտերհոլմ եկեղեցին, ծակուկէն երկաթէ և 290 ոտք բարձրութեամբ զանգակատունով:

Այս եկեղեցին առաջ Ֆրանչիսկեան կրօնաւորաց եկեղեցի էր, բայց այժմ կը գործածուի միայն իբրև հոյակապ դամբարան արքայական: Անոր ամենէն հռչակաւոր մասն է կոթալուս Ատոլֆուս

մատուռը որ կը պարունակէ Շու-
ետացի բոլոր վեհապետաց այս
մեծագոյնին շիրիմը :


Ի Սթոքհոլմ կան բազմաթիւ
եկեղեցիներ որոց մեծագոյն մասը
կը վերաբերին Լուտերականաց ,
բայց բաւական թուով եկեղեցիք
ևս կը վերաբերին Բողոքական ու-
րիշ յարանուանութեանց : Հոն կը
գտնուին նաև կաթոլիկաց եկե-
ղեցի մը և հետաքրքրական թան-
գարաններ :

ՇՈՂՇՈՂՈՒՆ ԼՈՅՍ

Շատ յաճախ կը պատահի որ
թռչունք կը հրապուրուին պայ-
ծառ լոյսէ , այնպէս որ կը զար-
նեն իրենքզիրենք լուսատանց (Ֆե-
նէր քոլեոն) թանձր ապակիներուն :
Լուսատանց պահապանք երբեմն
լուսատան դուրսի ճեմելիքին մէջ
գտած են ցամաքային և ծովային
թռչուններ : Ի ֆայէ , լուսատան
լապտերին շուրջը ծուղակ (սոլախ)
դրուած է , և բռնուող թռչունք
կը պահուին թանգարանի մը մէջ :
Անգամ մը կարապ մը զարնուե-
ցաւ լապտերին մինչ պահապանը
կը մաքրէր ապակին , և այսպէս
հարիւր վաթսուներկ Մեդլ . ոսկւոյ
փնաս մը յառաջ եկաւ :

Նիւ Եորքի նաւահանգիստին մէջ
կը գտնուի պղնձի վիթխարի (չատ
մեծ) արձան մը զոր շինեցին
Գազդիացիք և տուին նուէր Մի-
ացեալ Նահանգաց ժողովրդը-
եան նոցա հարիւրամեկին առ-
թիւ : Արձանը իւր ձեռքին մէջ
կը բռնէ մեծ լապտեր մը որ կ'ար-
ձակէ ելեկտրական լոյս , որոյ ակ-
նախախդ ճառագայթները կը լու-
սաւորեն ծովը մինչև շատ հեռին :

Նաւավարք կը սիրեն տեսնել
այս լոյսը , վասն զի կ'առաջնորդէ
անոնց դէպ ի նաւահանգիստը ,
կամ կ'իմացունէ թէ ո՛ր կը գրա-
նուին եթէ միայն կը նաւարկեն ծովե-
ղերաց շուրջը : Բայց այդ պայծառ լամ-
բարը պատճառ է հարիւրաւոր թռչնոց
մահուան : Նոքա կը թռչին դէպ այն
լոյսը , և կը զարնուին այդ շողշողուն
ապակիին , ճիշդ ինչպէս յաճախ տե-
սած էք լիերևս դուրսի փոքրիկ մի-
ջատներուն թռչիլը դէպ ի պատու-
հանը երբ պայծառ լոյս կայ սենեկին
մէջ : Խեղճ թռչունները կ'իյնան ան-
զգայ , և այսպէս հետզհետէ մեռած
թռչնոց դէպ մը կը դոյանայ լամբարին



ՍՏՈՔՀՈԼՄ

շուրջը : Յուալի՛ տեսարան , և սակայն
թռչունք չեն խրատուիր աւելի աղէկ
բանով : Չուկերն ալ կը հրապուրուին
պայծառ լոյսէ : Ասկէ մեծ օդուտ կը
քաղեն կարթ նետողները : Երբ Սկով-
տիոյ Ֆրիթ Պրիճ կամուրջին հիմքը
կը դրուէին , գործաւորք երբեմն ձու-
կեր կը բռնէին որք իրենց քով կը դի-
մէին հրապուրուելով գործածուած
լոյսէն :

Սիլուէյի (Սկովտիա) ծովեղերաց վրայ
սիրելի զբօսանք է ջրին եզերքը ձիով

ժուռ գալ գիշեր Ժամանակ բոցավառ
շահերով : Սարմին ձուկը (սահադ դուռը)
հրապուրուելով լոյսէն , որչափ կարե-
լի է մօտ կուգայ անոր , և ձիւտորը
նիզակով կը զարնէ և ձեռք կը բերէ
զայն : Բայց ծովեղերաց այդ մասին
քաջ ծանօթութիւն հարկ է ձիւտու-
րին ապահովութեան համար , վասն զի
մակրնթացութիւնն արագ կը բարձրա-
նայ հոն :

Այսպէս ձուկերն ևս թռչնոց նման
երբեմն կը հրապուրուին շողշողուն
լոյսէ իրենց կորստեան համար : Բայց

դուք և ես կրնանք սորվիլ ասկէ թէ ամէն շողջողացող չէ ոսկի, և թէ շատ բաներ որ կը կարծենք թէ յոյժ օգտակար պիտի լինին մեզ, իրօք զնասակար են:

ԹԻԹԵՒ ՆԱԽԱԿՆԵՐ


Պատկերին մէջ տեսնուած նաւակը, որ իռլանտացւոց մէկ գաւառական լեզուաւ կը կոչուի «բար», կը գործածեն իռլանտացի կարուէյ լճոցին մէջ բնակող կղզեցիք: Ենթուած է շատ թեթեւ կազմածի մը վրայ տարածելով ձիւթազօծ (շէմֆօֆօլ) լծանձը կտաւ: Թէպէտ տկար կ'երևի, բայց կը դիմանայ փոթորիկաց օգերու, և նաւավարք կը վարեն զայն մեծ ճարտարութեամբ: Քաւրահին մէկ առաւելութիւնը սա է որ չնչին ծախքով մը կը շինուի, և միւսը՝ որ շատ թեթեւ ըլլալով նաւավարը կարող է դիւրութեամբ կրել զայն իւր ուսին վրայ: Ինչպէս պատկերին մէջ կը տեսնենք որ կ'ընէ անոնցմէ մին: Սոյն տեսակ նաւակներ այդ կողմը կը գործածուին դարերէ հետէ. առաջ անոր գործածութիւնն ընդհանրացած էր իռլանտացի ուրիշ կողմերն ևս: Կանուխ, հինգերորդ և վեցերորդ դարու Քրիստոսեայ միսիոնարք ծովեզերաց շուրջ ասա և անդ կը նաւարկէին ասոր շատ նման նաւակներով: Սէյլսցի ձրկնորսք ունին նմանօրինակ նաւակ: Ասոր նման ուրիշ նաւակ մը կը գործածէին հին եգիպտացիք: Ասոնք երբ կ'երլէին Նեղոսէն վեր, նաւակը իրենց ուսերուն վրայ կ'առնուէին և այսպէս կը դառնային ջրվէժներուն շուրջը: Ամերիկեան Հնդկիք ևս ունին նաւակ մը տեսակ մը ծառի կեղևէ շինուած, զոր շարկած կը կրեն նոյն կերպով:

ԱՅԻՈՒԿ ՊԵՏՐՈՍԸ

Այն ընտանիքը որոյ հետ կը բնակիմ, կ'ըսէ այս յօդուածը գրողը, ունի ընտանի ագուաւ մը որոյ վրայ կ'արժէ խօսիլ: Իբր տարի մը առաջ տղայք ձեռք բերին թռչուն մը, որ մայրենի բոյնէն նոր ելած էր դուրս: Շատ մը տացի էր նա և տղայք կը զբօսնուին խաղեր ընելով անոր: Ասոնք անվասա բաներ էին, բայց ագուաւը լուծեց անոնց անպատիւ վարմանց վրէժը և կտրեց իւր յարաբերութիւնն անոնց հետ: Ղիմեց տղայոց հօրը որ նշանաւոր է բոլոր կենդանեաց ցուցած բա-

րեսարտութեանը մասին: Թռչնոյն նոր տէրը Պետրոս անուանեց իւր սեռեկ սիրականը, և ագուաւը դիւրաւ սորվեցաւ իւր անունը և միշտ կը պատասխանէր երբ կոչուէր բացի այն պիտի ժամանակներէ որ կ'ըլլար բարկացած: Պետրոս կ'երթար իւր տիրոջ ետեւէն երբ սա կ'երթար արտը, անտառը և դրացեաց այցելութեան: Երբեմն ճամբորդութիւններ կ'ընէր մեր ձակայ սեղերն առանձին, և ընդհանրապէս տուն կը դառնար միմնա լէն առաջ: Անցեալ աշնան սոսկայի փոթորիկի մը բռնուեցաւ, և երեկոյին տուն չգարձաւ ինչպէս սովոր էր

քով ուրախ իւր տէրը գտնելուն համար, և իւր բոլոր կարողութեամբ կը ջանար յայտնել իւր տէրը գէպի բարեկամը: Մեզք որ չէր կրնար լիովին պատմել թէ ինչ դժբաղդութիւն պատճառ եղած էր իւր բացակայութեան, բայց այս ալ իմացուեցաւ յետոյ ուրիշ ազբիւրներէ: Այդ Գեկտեմբերի ձեան փոթորիկին բռնութենէն Պետրոս քշուած տարուած էր ուրիշ գիւղ մը տնէն քանի մը մըն հեռի: Տղայ մը բռնեց զայն և չգիտնալով թէ որու կը վերաբերէր, կտրեց թեւերուն ծայրերէն որպէս զի կարող չըլլար թռչելով փախչիլ: Իւր տան կարօտու-



ԳՈՐԴԱՆ ԿՈՉՈՒՄԸ ՆԱԽԱԿՆԵՐԸ

միշտ: Կ'անցնէին օրերը և Պետրոսէ լուր մը չէր առնուեր. ուստի ընտանիքը մակաբերեցին թէ նա կամ սպաննուած էր կամ գնացած էր ուրիշ ագուաներու հետ:

Չիւնը գետնին վրայ տարածուած մնացած էր ամբողջ ձմեռը և շատ խոր. բայց Մարտ ամսուն մէջ յանկարծ աներևոյթ եղաւ յորդ անձրև մը իջնելով: Գետինը բոլորովին լերկ ըլլալէն շուտ ետքը, տէրը մինչ կը զբաղէր ծառաստանին մէջ իւր գործով, քիչ մը հեռին տեսաւ խեղճ, յոգնած և տղմով շաղախեալ ագուաւ մը որ քալելով և ցատկելով կու նայեցաւ, հասկցաւ որ նա էր Պետրոս, անէն հեռացող անառակը: Իսկոյն իւր բազկին վրայ առաւ զայն, ա՛յնպէսմը սիրելով շոյելով խեղճ թռչունը, որպէս թէ ըլլար դպրոցէն փախած տղայ մը որ զղջալով ետ դարձած էր: Պետրոս կը կենար մարդուն

թենէն մաշող այն ոգորմելի թռչունը կարողեղած չէր քայլել խոր ձեան մէջէն, ոչ ալ թռչիլ, ուստի համբերութեամբ սպասած էր բոլոր ձմեռը մինչև որ գետինը յերևան եկաւ, և այնուհետև ճամբայ ելած էր ոտքով երթալ տուն: Դադանիք պիտի մնայ թէ նա ինչպէս գտաւ այնքան մըն երկայնութեամբ իւր անծանօթ ճամբան դաշտերու, անտառներու և զանազան ճամբաներու մէջէ: Հիմա թէպէտ նորէն կրնար թռչիլ, չէր համարձակեր ձեռնարկել ասոր, այլ առաջուրէն աւելի յարեցաւ իւր հին բարեկամին:

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԼԱՄԲԱՐԸ

Խոր ածխահանքաց մէջ աշխատողները լուսոյ պէտք ունին: Այս լոյսը կ'արձակուի գործաւորին գլխարկին սուղի կողմը հաստատուած փոքր լամբարէ մը, և հանքագործք կարող կ'ըլլան տեսնել իրենց գործը:

Բայց յաճախ ամխահանքաց մէջ կը գտնուի զիւրաւառ կազ մը որ լամբարին լոյսէն կը բռնկի և պայթում յառաջ կու գայ, որոյ հետևանքն է մահ և աւերած հանքին մէջ: Իբր 1813-ին, Սրբ Հրովքէ Տէրի հնարեց ապահովութեան լամբար մը, որոյ բոցը կ'ամփոփուէր նուրբ թելով հիւսուած գլանաձև փոքրիկ ամանի մը մէջ, որ տաքութիւնը ներքը կը պահէր և կազը կրակ չէր առնուր:

Այն Թ+ լրագրին մէկ յօդուածագիրը կ'ըսէ. «Կը ճանչնայի ամխահանքի մէջ աշխատող տղայ մը որ առ մէն որ կը գործածէր Տէրի լամբար մը: Իրեն պատուիրուած էր լամբարին կափարիչը վեր չառնուլ, որպէս զի չըլլայ թէ հանքին մէջի կազը կրակ առնու և սոսկալի պայթիւն յառաջ գալով այրէ մեռցունէ հանքագործներն և անոնց ձիերը: Օր մը անմիա գործաւոր մը քաշեց հանեց իւր լամբարին կափարիչը իւր սիրտը վառելու համար, և ահա կազը կրակ առաւ իսկոյն: Այրեց մարդը սոսկալի կերպով, յետոյ յառաջ խուժեց հանքին մէջ բոցի հատուածի մը ձեւով, այրելով ամէն ինչ որ կը գտնէր իւր առջև: Վերոյիշեալ տղան երբ տեսաւ որ բոցը կու գար դէպ իւր կողմը, ըստ կարի շուտով գլխիվայր դարձուց դատարկ սայլ մը անոր ներքև մտնելով: Կարակ անցաւ տղային վրայէն չչման հայտով և այրելով և հնոցի նման ճարձատելով: Այն ինչ գիտցաւ տղան թէ անցած էր բոցը, սայլը մէկ կողմ գլորեց, ելաւ դուրս, գոյրը նետած և դողալով: Բայց կրակը թունաւորած էր օդը և լցուցած էր հանքը ապակահետակ կազով որ մարեց տղային ապահովութեան լամբարը և թողուց զնա խաւարին մէջ: Իւր բրդեղէն գլխարկը հանեց գլխէն և խոթեց բերանը, մէկ մասոյն ալ ծածկեց քիթը և վազեց իւր կեանքն ազատելու համար: Ահաւոր բան էր վազել մեռած և մահամբձ հանքագործաց վրայէն: Երբեմն գլխիվայր կ'իյնար կը գորէր ձիւ մը դիակին զարնուելով և յաճախ կը լսէր մեռնողներուն հեծու թիւնները: Բայց կարողացաւ հասնիլ հանքին բերանը, և շնչել մաքուր օդ դեռ չնուաղած: Իւր կեանքն ազատուեցաւ, թէպէտ երկար ժամանակ անցաւ մինչև որ փարատեցաւ երկիւղը:»

ԱՒԱԳՈՅՆ ՏՂԱՆ

Բաբելոնի նշանաւոր վաճառականներէն մին մեռած էր Հնդկաստանի մէջ. իւր ժառանգութիւնն երկու հաւասար մասի բաժնելով թողած էր իւր երկու տղոցը՝ անոնց քոյրը ամուսնացունելէ ետքը, և երեսուն հազար ոսկոյ նուէր մը կը սահմանէր այդ երկուքէն անոր որ պիտի նկատուէր իբր զինքն առ մենէն աւելի սիրողը: Անդրանիկը շիրիմը կանգնեց. երկրորդն իւր ժառանգութեան մէկ մասը քոյրը դրամ, ժիտին վրայ աւելցուց: Ամենքը կ'ըսէին, «Անդրանիկն է որ հայրն ամենէն աւելի սիրէր. կրտսերն աւելի սիրէր. անդրանիկն տալու է երեսուն հազար ոսկին:» Երկրորդն իւր մասը տուաւ. «Յիւսուած եղբեր, բժշկուեք է, քիչ ատենէն պիտի գայ Բաբելոն:» «Օրհնեալ ըլլայ Տէրը,» պատասխանեց երիտասարդը, «բայց այդ շիրիմը շատ սուղի նստաւ ինձ:» Դատարը յետոյ մի և նոյն բանը կրտսերին ըսաւ. «Օրհնեալ ըլլայ Տէրը,» պատասխանեց կրտսերը, «հօրս պիտի դարձունեմ բոլոր ունեցածս. բայց կ'ուզէի որ քոյրս տուածս անոր ձգէր:» «Բաւ ունեցածդ քեզ պիտի մնայ,» ըսաւ դատարը, «և երեսուն հազար ոսկին ալ քու կը պիտի ըլլայ. դուն ես քու հայրը ամենէն աւելի սիրողը:»

Բանը վրայ աւելցուց: Ամենքը կ'ըսէին, «Անդրանիկն է որ հայրն ամենէն աւելի սիրէր. կրտսերն աւելի իւր քոյրը կը սիրէ. անդրանիկն տալու է երեսուն հազար ոսկին:» Երկրորդն իւր մասը տուաւ. «Յիւսուած եղբեր, բժշկուեք է, քիչ ատենէն պիտի գայ Բաբելոն:» «Օրհնեալ ըլլայ Տէրը,» պատասխանեց երիտասարդը, «բայց այդ շիրիմը շատ սուղի նստաւ ինձ:» Դատարը յետոյ մի և նոյն բանը կրտսերին ըսաւ. «Օրհնեալ ըլլայ Տէրը,» պատասխանեց կրտսերը, «հօրս պիտի դարձունեմ բոլոր ունեցածս. բայց կ'ուզէի որ քոյրս տուածս անոր ձգէր:» «Բաւ ունեցածդ քեզ պիտի մնայ,» ըսաւ դատարը, «և երեսուն հազար ոսկին ալ քու կը պիտի ըլլայ. դուն ես քու հայրը ամենէն աւելի սիրողը:»

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

Քանի մը շարժման առաջ տեսայ սրտաշարժ և գեղեցիկ տեսարան մը: Մինչ կ'անցնէի խորատարտ տեղէ մը, ուշադրութիւնս գրաւեց բաւական տարուաք տիկին մը որ կը շանար իւր ճամբան քալել քարոտ բլուրին կողին վրայէն: Շատ կամայ և զգուշութեամբ կու գար: Բլուրը շատ զառի վայր էր. ես խղճացի իւր վրայ և կը խորհէի թէ արդեօք աղէկ չէ՞ր ըլլար թէ՛ օգնէի իրեն, և ահա լսեցի որ տղայ մը սուլելով կու գար իմ կողքին ետևէն: Ճատկեց առաջ անցաւ, վազեց վեր ելաւ բլուրը, տիկնոջ թելը մտաւ և զօրացուց անոր քայլերը միանգամայն խօսելով հաճոյական խօսքեր. թէպէտ չէի լսեր զայնս բայց կը մակարեթէի, վասն զի անոր երեսը կը փայլէր երջանկութեամբ: Մինչ կ'անցնէինք, լսեցի որ տիկինը կ'ըսէր սա խօսքերը. «Ինչ աղու որ բան է ունենալ տղայ մը որ օգնէ իւր մօր՝ բլուրէն վար իջած ժամանակը:» Հասկըցայ որ նոքա էին մայր և որդի: Խորհեցայ թէ քարոզ մը կար այդ քանի մը բառերուն մէջ: Երանի՛ թէ ամէն տղայ լսէր զայնս:

Դուք տղայք, ամէնքդ ալ պարտիք օգնել ձեր մօր մինչ նա կ'իջնէ կենաց բլուրէն վար: Բայց շատ ցաւալի է որ դուք ամէնքդ չէք կատարեր այդ պարտականութիւնը: Կան ձեր մէջէն ունեցող որ աւելի կը դժուարացունեն իրենց մօր այդ ճամբան: Կ'ընեն այնպիսի բաներ որ նեղութիւն կու տան անոր: Չեր մայրը շատ հոգ ունի ձեր վրայ, և այսպէս իւր ճամբան կը քալէ այնպիսի տեղերէ որ հազար անգամ խորատարտ է քան բլուրին զառի վայրը: Թերևս չար ունակութիւններ


կը ստանաք և չէք ուզեր հնազանդել անոր խրատներուն: Անոր փափուկ սիրտը կը ճնխի և կը կոտորի ձեր չար վարքովը: Նա գիտէ թէ ինչ է չար գործոց հետևանքը, թէ՛ եթէ տղայ մը կը սխի այնպիսի ունակութիւններ գորս իւր պատանեկութեան մէջ կը համարի թէ՛ թե բաներ հման սարդի ստայնի, կամայ կամայ այդ ունակութիւնը կրնան զօրանալ իւր շուրջ շրջապէս նման, և երբ չափահաս մարդ կ'ըլլայ, կ'ըլլայ անոնց գերի:

Հիմա, տղայք, եթէ կ'ուզէք օգնել կենաց բլուրէն վար իջնող ձեր սիրելի մօր, և ճամբան հարթել անոր առջև, ըրէք այն բաները որոս նա կ'ուզէ որ ընէք: Եւ եթէ զերծ էք չար ունակութիւններէ, թերևս չէք խորհիր այն փոքր բաներուն վրայ որոց մով կեանք կը կազմուի: Այնպէս քաղաքավար եղէք դէպ ի ձեր մայրը՝ ինչպէս կ'ուզէք ըլլալ դէպ ուրիշ տղայ մայրերը: Բիրտ ոճով մի խօսիք անոր: Միշտ ազնուութիւն ցուցէք երբ կը խօսիք անոր, և հոգ տարէք յիշել թէ՛ նա երբ և ո՛ր կ'ուզէ որ մասնաւոր որ աշադրութիւն տաք կատարել գործ մը:

ՏԻԿ - ՄՐՋԻՆԻՔ

Մեքսիքոյէ դէպ հարաւ կը գտնուին տեսակ մը մրջիւնք որ կը բռնեն ուրիշ տեսակէ մրջիւնքեր տիկ շինելու համար զանոնք, զորս կը պահեն իրենց բոյնին մէջ, և կ'երթան դուրս մեղր հաւաքելու համար: Հաւաքուած մեղրը կը բերեն կը լեցունեն տիկ - մրջիւնքերուն կոկորդէն վար: Զայս ընելէ առաջ այնպէս կը խաճանեն տիկ - մրջիւնք մարմինները, որ ասոնք կ'ուսին և կը գոցուին իրենց դուրսի բացուածքները, այնպէս որ անոնց կոկորդէն վար լրցուած մեղրը դուրս չկրնար ելլել: Այս կերպով խեղճ մրջիւնք կ'ըլլայ լոկ տիկ մը անոր տէր մրջիւնքի համար, և կը լցուի մեղրով մինչև որ իւր փոքրիկ մարմինը կը ձկտուի (կեռնէ) և սե հաղարջի (քեռն է-ն-ն) կերպարան կ'առնու: Երբ ասոնց տէր մրջիւնք պէտք կը զգան, կ'երթան ծծել մեղր այս դժբաղդ տիկերէն միայն կոկորդէն: Նոցա մէջ մթերուած մեղրը բարկ համ կը ստանայ կամ կը քացիտ այս կերպով պահուելուն պատճառաւ: Մարդիկ կը բանան մրջիւնք բոյները, դուրս կը հանեն տիկ - մրջիւնքեր և կը ծախեն զանոնք: Անոնք կը շինուի բարկ համով օշարակ:

Ամերիկայի Մեքսիկոյէ Մարտիտի Արտոնատի Տնօրէն - Խմբակ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՎՈՐ ԳՈՅԱՅԵԱՆ